

Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման հիմնական տեսամեթոդական մոտեցումները և ՀՀ դիրքը համաշխարհային զեկույցներում

Վարդանյան Ա. Է.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Հայաստան, Երևան)

artsruni.vardanyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ ապահովվածություն, ինդիկատոր, գործարար միջավայր, ինդեքս, միջազգային դիրք

Основные теоретико-методические подходы оценки инфраструктурного обеспечения предпринимательской деятельности и позиция Армении в мировых отчетах

Варданыан А.Э.

Армянский государственный экономический университет (Армения, Ереван)

artsruni.vardanyan@gmail.com

Резюме: Инфраструктурное обеспечение предпринимательской деятельности это процесс развития инфраструктурной системы через использование инструментов инфраструктуры субъектами предпринимательской инфраструктуры и путем организации видов инфраструктурной деятельности. В рамках нашего исследования мы использовали следующие показатели для измерения обеспечения инфраструктуры предпринимательской деятельности: доступ к финансовым ресурсам, законодательное регулирование, налоговая система, таможенная система, бизнес-инфраструктура, судебная система, уровень коррупции.

Ключевые слова: обеспечение, индикатор, бизнес-среда, индекс, международная позиция

The main theoretical and methodological approaches to assessing the infrastructural provision of entrepreneurial activities and Armenia's position in global reports

Vardanyan A.E.

Armenian State University of Economics (Armenia, Yerevan)

artsruni.vardanyan@gmail.com

Abstract: Infrastructural provision of entrepreneurial activities is the process of developing an infrastructure system through the use of infrastructure tools by subjects of business infrastructure and by organizing types of infrastructure activities. As part of our study, we used the following indicators to measure the provision of business infrastructure: access to financial resources, legislative regulation, tax system, customs system, business infrastructure, judicial system, level of corruption.

Keywords: Provision, indicator, business environment, index, international position

Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածություն և տարրերի ամբողջությունն ասելով պետք է հասկանալ տնտեսության, սպասարկող արտադրությունների, ոլորտների համալիրը, որն ընդգրկում է ճանապարհների, ջրագծերի, նավահանգիստների, կամուրջների, օդանավակայանների, պահեստների կառուցումը, էներգետիկ տնտեսությունները, կապը, տրանսպորտը, կրթությունը, տեղեկատվական ապահովվածությունը, գիտությունը, առողջապահությունը, ֆինանսավարկային ապահովվածությունը, իրավական ապահովվածությունը և այլն:

Մեր կողմից բարձր գնահատելով այլ հեղինակների կողմից ձեռնարկատիրական ենթակառուցվածքների և դրանց տարրերի բնորոշման առանձնահատկությունները, ամփոփելով սեփական դիտարկումները հակված ենք պնդելու, որ պետության կողմից ենթակառուցվածքային ապահովվածության և դրա տարրերի համակարգի ստեղծման նպատակն է համարվում ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների աջակցությունը, որը ենթադրում է տարբեր ձևերի ու տեսակների ծառայություններին հասանելիության կազմակերպում, նրանց կողմից ներկայացված բիզնես-ծրագրերի կազմակերպական ձևա-

կերպման աջակցություն, հետագա ֆինանսական աջակցության և գործունեության ուղեկցման ընտրություն, այն նպատակով, որպեսզի ապահովվի ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ տեղաբաշխումը և ներկայացված նախագծերի իրացումից առավելագույն արդյունքի ստացումը: Նշված ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինների կարևորագույն գործառույթը պետք է համարվի փոքր ձեռնարկատիրության աջակցման և զարգացման մարզային ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Այսպիսով, համակարգված և արդյունավետ գործող ենթակառուցվածքային միջավայրի տարրերը հանդիսանում են ձեռնարկատիրական գործունեության զարգացման, ինչպես նաև պետական և համայնքային մակարդակով դրա աջակցման արդյունքային միջոցառումների իրականացման գլխավոր դոմինանտներից մեկը: Ձեռնարկատիրական գործունեությունը հաջողությամբ զարգանում է, եթե երկրի մարզերում ստեղծվել և գործում է կայուն ու արդյունավետ ենթակառուցվածք:

Ձեռնարկատիրական գործունեության հաջողված զարգացման գլխավոր պայմաններից մեկը ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածությունն է կայուն զարգացող և կարգավորված աշխատող տարրերի առկայության պայմաններում: Հենվելով տարբեր ժամանակների տնտեսագետ մտածողների հետազոտությունների վրա, մեր կողմից առանձնացվել են ձեռնարկատիրական գործունեության համար կարևորություն ներկայացնող շուկայական ենթակառուցվածքի գործառույթները և ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության հիմնական տարրերը (գծապատկեր 1.):

Անհրաժեշտ է նշել, որ տնտեսության մեջ պետության ուղղակի միջամտության ձևերից մեկը համարվում է պետական ձեռնարկատիրական ենթակառուցվածքային տարրերի համակարգը: Այն ձևավորում է ձեռնարկատիրական գործունեության հատուկ տեսակ, որն իրականացվում է պետական ոլորտի շրջանակներում և կապված է ապրանքների արտադրության ու իրացման /ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման/ մեջ պետական ձեռնարկատիրության ուղղակի մասնակցության հետ: Դրա հետ միասին


պետությունը հանդես է գալիս նաև որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտ՝ իրացնելով որոշակի համապետական նպատակներ. արտադրության կառուցվածքային վերափոխություն, ոլորտային և տարածքային համամասնությունների հարթեցում, գիտատեխնիկական առաջընթացի խթանում, տնտեսության արդյունավետության բարձրացում¹:

Պետական կարգավորումը հիմնականում իրականացվում է պետական հատվածի շրջանակներում, որը խառը տնտեսության պետական կառավարման մարմինների կողմից ամբողջությամբ վերահսկվող, պետական սեփականության ներքո գտնվող մասն է: Որպես ձեռնարկատիրական ենթակառուցվածքային տարրեր տնտեսության պետական հատվածի մեջ են մտնում կրթությունը, ազգային առողջապահական ծառայությունը, սոցիալական ծառայությունները, հանրային տրանսպորտը, ազգային և տեղական պետական կազմակերպությունները, պետական կորպորացիաները²:

Կարելի է արձանագրել այն փաստը, որ Հայաստանում պետական ձեռնարկատիրության ոլորտը բնութագրվում է թույլ զարգացած ենթակառուցվածքային մակարդակով և ոչ ընդգրկուն ու փոխկապակցված տարրերի համակարգով, ինչը պահանջում է ընդունել կազմակերպատնտեսական և քաղաքական առաջանցիկ համապատասխան որոշումներ: Մեր կարծիքով, նշվածի առաջին քայլերը թեև կատարվել են դեռևս մասնավորեցման սկզբման սկզբում, սակայն հետագա քայլերն այս ուղղությամբ ամբողջական իրագործելի չեն դարձել: Այդ ուղղությամբ արդյունավետ լուծումներից կարելի է համարել պետական, մարզային և տեղական իշխանության մարմինների կողմից ձեռնարկատիրական գործունեության աջակցման համար տարբեր արդյունավետ միջոցների մշակումն ու ներդրումը, ինչպես նաև դրանց անմիջական մասնակցությունը ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքների զարգացման գոր-

¹ Medaković V, Marić B, Gojković R (2016) Cluster as a model organization for small and medium-sized enterprises. 3rd International scientific conference "Conference on mechanical engineering technologies and applications" COMETA 2016. East Sarajevo, Jahorina 2016, pp 517–522


² Горяинова Л.В. Инфраструктура как объект государственного-частного партнерства. \ Экономика, статистика и информатика. Вестник УМО МЭСИ. –№6. – С.32.



Չճապատկեր 1.

Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության տարրերը՝ շուկայական ենթակառուցվածքների գործառույթների համատեքստում:

(Չճապատկերը կառուցվել է հեղինակի կողմից)



Չճապատկեր 2. Պետության ազդեցությունը ձեռնարկատիրական ենթակառուցվածքի տարրերի զարգացման վրա:

(Չճապատկերը կառուցվել է հեղինակի կողմից)

ծունեության ենթակառուցվածքների զարգացման գործում՝ հետադարձ կարգով ապահովելով արդյունավետ արդյունքների ստացումը (գծապատկեր 2):

Ձեռնարկատիրական գործունեությունն առավելապես պետք է կրի ոչ թե պետական բնույթ, այլ իր զարգացման համար պետք է որոշ ուղղություններով անհրաժեշտության դեպքում զգա պետական աջակցությունը: Այդ ենթատեքստով նպատակահարմար է, որպեսզի պետությունը ձեռնարկությունների գործունեության վերաբերյալ իրականացնի արդյունավետ մշտադիտարկում և բացահայտի պետության միջամտությունն ու աջակցությունը պահանջող գործունեության թույլ և վտանգավոր կողմերը:

Մեր ուսումնասիրության շրջանակներում որպես ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության չափման ինդիկատորներ կօգտագործենք՝

- Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը
- Օրենսդրական կարգավորում
- Հարկային համակարգ
- Մաքսային համակարգ
- Գործարար ենթակառուցվածքներ
- Դատաիրավական համակարգ
- Կոռուպցիայի մակարդակը

Նշենք նաև, որ մեր կողմից ներկայացված գործոնների զգալի մասը ներառված են Global Entrepreneurship Index-ում (այսուհետ՝ GEI), որտեղ Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ ուսումնասիրությունը կներկայացնենք աշխատանքի համապատասխան բաժնում:

Այս համատեքստում նշենք նաև, որ GEI-ը միակ համաշխարհային ինդեքսը չէ, որն անհրաժեշտ է ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի քննարկմանը զուգընթաց: Մեր աշխատանքում ուսումնասիրել ենք հետևյալ համաշխարհային ինդեքսները՝ GEI, «Համաշխարհային տնտեսական ֆորումի» (The World Economic Forum, այսուհետ WEF) տնտեսական ազատության զեկույցներում ներառված 4 ինդեքսները՝ շուկա մուտքի ազատության ինդեքսը, ներմուծման պետական կարգավորման գործիքները կամ մաքսային վարչարարության ինդեքսը, գործարար կլիմայի ինդեքսը, տրանսպորտ-հաղորդակցման ենթակա-

ռուցվածքների ինդեքսը, WEF-ի մրցունակության զեկույցում ներառված ենթակառուցվածքային ինդեքսները, երկրների գլոբալ մրցունակության ինդեքսը կամ գլոբալ մրցունակության համաթիվը (GCI կամ ԳՄՀ), բիզնեսի մրցունակության ինդեքսը (BCI), ինչպես նաև ուսումնասիրվել է Համաշխարհային բանկի Doing Business զեկույցի համաթիվը:

Ներկայումս ինչպես ՀՀ-ում, այնպես էլ բազմաթիվ այլ զարգացող երկրներում արդիական խնդիր է միջազգային շուկայում բարենպաստ դիրք գրավելու և միջազգային մրցունակությունը բարձրացնելու նպատակով տարաբնույթ մարքեթինգային և աճի ռազմավարությունների մշակման և արդյունավետ կիրարկման հարցը: Տվյալ դեպքում հիմնական խնդիրը միջազգային շուկայում ներկայացված լինելու կամ ներկայացվածության աստիճանը բարձրացնելու մարտավարության մշակման մեջ է, ինչը զարգացող երկրների կազմակերպություններին կօգնի դուրս գալ միջազգային շուկայում զարգացած երկրների կազմակերպությունների «մշտական սովել-րից» և նրանց գործունեությունը սպասարկող կոռպորատորներից:

Միջազգային պրակտիկայում ներդրողներին գրավելու հիմնական պայմաններն են երկրների բացության գործակիցը, գործարար կլիման, տեխնոլոգիական մրցունակությունը և դեֆոլտային էմիտենտի վարկանիշը: Ելնելով այն իրողությունից, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն էապես փոփոխել է «աշխարհի դիմագիծն» ու առանձին երկրների հնարավորությունները վերոնշյալ ցուցանիշների առումով, ինչպես նաև այն կանխատեսումները, որ երկրները հնարավորություն չունեն արագորեն հաղթահարելու ստեղծված իրավիճակը, փորձենք ներկայացնել բացառապես հետճգնաժամային վարկանիշներում Հայաստանի զբաղեցրած դիրքերը: Միջազգային ասպարեզում նշյալ ցուցանիշների գծով ամենահեղինակավոր վարկանիշները հրապարակվում են այսպես կոչված G20-ի հանդիպումների ընթացքում կազմակերպվող «Համաշխարհային տնտեսական ֆորումի» շրջանակում¹:

¹ Ներառում է ավելի քան 12000 փորձագետների ինչպես G 20-ի անդամ երկրներից, այնպես էլ վերլուծության ենթարկված և վարկանիշներում ընդգրկված երկրներից:

Աղյուսակ 1. WEF-ի մրցունակության գեկույցում ներառված ենթակառուցվածքային ինդեքսները
և Հայաստանի դիրքը, 2008-2018թթ.

Հ/Հ	Տարեթիվը	Ինդեքսը	Հայաստանի դիրքը
1.	2017-2018	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	57
2.	2017-2018	Ճանապարհների որակը	85
3.	2017-2018	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	64
4.	2017-2018	Տրանսպորտային ենթակառուցվածքի որակը	88
5.	2017-2018	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	77
6.	2017-2018	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	73
7.	2017-2018	Ընդհանուր ենթակառուցվածք	80
8.	2016-2017	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	58
9.	2016-2017	Ճանապարհների որակը	81
10.	2016-2017	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	66
11.	2016-2017	Տրանսպորտային ենթակառուցվածքի որակը	94
12.	2016-2017	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	72
13.	2016-2017	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	67
14.	2016-2017	Ընդհանուր ենթակառուցվածք	82
15.	2015-2016	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	58
16.	2015-2016	Ճանապարհների որակը	75
17.	2015-2016	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	71
18.	2015-2016	Տրանսպորտային ենթակառուցվածքի որակը	99
19.	2015-2016	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	69
20.	2015-2016	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	67
21.	2015-2016	Ընդհանուր ենթակառուցվածք	82
22.	2014-2015	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	61
23.	2014-2015	Ճանապարհների որակը	80
24.	2014-2015	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	68
25.	2014-2015	Տրանսպորտային ենթակառուցվածքի որակը	97
26.	2014-2015	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	62
27.	2014-2015	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	68
28.	2014-2015	Ընդհանուր ենթակառուցվածք	78
29.	2013-2014	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	67
30.	2013-2014	Ճանապարհների որակը	82
31.	2013-2014	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	69
32.	2013-2014	Տրանսպորտային ենթակառուցվածքի որակը	90
33.	2013-2014	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	60
34.	2013-2014	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	70
35.	2013-2014	Ընդհանուր ենթակառուցվածք	80
36.	2012-2013	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	71
37.	2012-2013	Ճանապարհների որակը	80
38.	2012-2013	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	63
39.	2012-2013	Տրանսպորտային ենթակառուցվածքի որակը	89

40	2012-2013	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	69
41	2012-2013	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	75
42	2012-2013	Ընդհանուր ենթակառուցվածք	80
43	2011-2012	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	77
44	2011-2012	Ճանապարհների որակը	92
45	2011-2012	Տրանսպորտային ենթակառուցվածքի որակը	102
46	2011-2012	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	71
47	2011-2012	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	63
48	2011-2012	Ընդհանուր ենթակառուցվածք	77
49	2010-2011	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	76
50	2010-2011	Ճանապարհների որակը	87
51	2010-2011	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	79
52	2010-2011	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	78
53	2010-2011	Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք	81
54	2010-2011	Ընդհանուր ենթակառուցվածք	90
55	2009-2010	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	78
56	2009-2010	Ճանապարհների որակը	72
57	2009-2010	Երկաթուղային ենթակառուցվածքի որակը	82
58	2009-2010	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	82
59	2009-2010	Ընդհանուր ենթակառուցվածք	81
60	2008-2009	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	91
61	2008-2009	Ճանապարհների որակը	79
62	2008-2009	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	89
63	2008-2009	Ընդհանուր ենթակառուցվածք	90
64	2007-2008	Ընդհանուր ենթակառուցվածքի որակը	84
65	2007-2008	Ճանապարհների որակը	75
66	2007-2008	Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը	90
67	2007-2008	Ընդհանուր ենթակառուցվածք	87

Աղյուսակ 2. Հայաստանի ԳՄՀ-ն, 2008-2018թթ.

ԳՄՀ / Տարեթիվը	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Տեղ	96	97	98	92	82	79	85	85	79	73
Միավորը	3.73	3.71	3.76	3.89	4.02	4.10	4.01	4.01	4.07	4.19

Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից ըստ ԳՄՀ հաշվետվությունների:

«Համաշխարհային տնտեսական ֆորում-մի» տնտեսական ազատության ինդեքսների վարկանիշը ներառում է հետևյալ չորս հիմնական բաղադրիչները.

- շուկա մուտքի ազատության ինդեքսը,
- ներմուծման պետական կարգավորման գործիքները կամ մաքսային վարչարարության ինդեքսը,
- գործարար կլիման,

• տրանսպորտա-հաղորդակցման ենթակառուցվածքները¹:

Մրցունակության առումով երկրների իմիջի առավել բազմակողմ վարկանիշ է WEF-ի «Գլոբալ մրցունակության վարկանիշը», որը

¹ Մանասյան Ա.Վ. ՀՀ գործարար միջավայրի ռազմավարության նոր մոդել, «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, 2010թ., էջ 150:

կազմված է երկու խոշոր բաղադրիչ ինդեքսներից՝

- երկրների գլոբալ մրցունակության ինդեքսից կամ գլոբալ մրցունակության համաթիվ (GCI կամ ԳՄՀ),

- բիզնեսի մրցունակության ինդեքսից (BCI):

Իր հերթին երկրների գլոբալ մրցունակության ինդեքսը կազմված է 12 այլ առանձին բաղադրիչներից՝ երկրի ինստիտուտների որակը, ենթակառուցվածքները, մակրոտնտեսական կայունությունը, առողջապահությունը և նախնական կրթության որակը, բարձրագույն կրթությունը և մասնագիտական պատրաստվածության որակը, ապրանքների և ծառայությունների շուկայի արդյունավետությունը, աշխատանքի շուկայի արդյունավետությունը, ֆինանսական շուկայի զարգացման մակարդակը, տեխնոլոգիական զարգացվածության մակարդակը, ներքին շուկայի չափերը, կազմակերպությունների մրցունակությունը և երկրի նորարարական ներուժը:

Առանձնակի կարևորություն ունի նաև Doing business-ը, որտեղ զեկույցները պատրաստվում են հետևյալ 10 ենթացուցիչների հիման վրա.

1. գործարարության ձեռնարկում/ձեռնարկության հիմնում
2. շինարարության թույլտվություն
3. էլեկտրաէներգիայի հասանելիություն
4. սեփականության գրանցում
5. վարկավորում
6. ներդրողների պաշտպանվածություն
7. հարկերի վճարում
8. միջազգային առևտուր
9. պայմանագրերի իրագործում
10. ձեռնարկության լուծարում/սնանկացում

Զեկույցի մեթոդաբանությունը հիմնվում է հետևյալ տրամաբանության վրա. որքան ցածր են տվյալ պետության ընդհանուր դիրքային, ինչպես նաև ենթացուցիչների արդյունք-

ները, այդքան բարձր են գործարարության ցուցանիշները: Doing Business զեկույցում վարկանշային դիրքի փոփոխությունն արձանագրում է, թե անցած մեկ տարվա ընթացքում տվյալ երկիրը ինչ առաջընթաց է գրանցել բարեփոխումների մասով և որքանով է բարելավել գործարար միջավայրը:

Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման հիմնական տեսամեթոդական մոտեցումներից անցում կատարենք համաշխարհային զեկույցներում ՀՀ դիրքի ուսումնասիրությանը:

WEF-ի մրցունակության զեկույցում 2008-2018թթ-ի գնահատման սանդղակներում ներառված ենթակառուցվածքային ինդեքսները ներկայացված են երկրորդ սյունով (2nd Pillar): Այն բովանդակում է՝

1. ընդհանուր ենթակառուցվածքի որակը (Quality of overall infrastructure),
2. ճանապարհների որակը (Quality of roads),
3. երկաթուղային ենթակառուցվածքի որակը (Quality of railroad infrastructure),
4. տրանսպորտային ենթակառուցվածքի որակը (Quality of air transport infrastructure),
5. Էլեկտրաէներգիայի մատակարարման որակը (Quality of electricity supply),
6. Էլեկտրաէներգիայի և հեռախոսակապ ենթակառուցվածք (Electricity and telephony infrastructure),
7. ընդհանուր ենթակառուցվածք (2nd pillar: Infrastructure):

Աղյուսակ 1-ի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ ընդհանուր առմամբ Հայաստանի դիրքը միջազգային այդ ինդեքսներում տատանվում է [57;102] միջակայքերում: Վատագույն դիրքում Հայաստանը եղել է 2011-2012թթ-ին տրանսպորտային ենթակառուցվածքի ասպեկտում: Միջազգային հարթակներում ցածր են գնահատվել ՀՀ ճանապարհ

Աղյուսակ 3. Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի Doing Business զեկույցում, 2008-2018թթ.

DB	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Տեղ	59	52	49	42	38	32	43	45	35	47

Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից ըստ ԳՄՀ հաշվետվությունների:

ների անցանելիությունը և ընդհանուր վիճակը, ինչն էլ, բնականաբար, բացասական է ազդել ցուցանիշի ձևավորման վրա:

Այժմ անդրադառնանք համաշխարհային զեկույցներին, որոնք տեղեկատվություն են տրամադրում Հայաստանի համաշխարհային դիրքի վերաբերյալ ըստ տարբեր մրցունակության ցուցանիշների:

Դիտարկելով GCI ցուցանիշները սկսած 2008թ-ից՝ արձանագրեցինք, որ GCI 2012-2013 զեկույցում Հայաստանը զբաղեցրել է 82-րդ տեղը 144 պետությունների միջև՝ բարելավելով իր դիրքը ի համեմատ 2009թ-ի (97-րդ տեղ) և GCI 2011-2012 զեկույցով գրաված 92-րդ տեղի (142-ից) համեմատ: Իսկ «Հարկման չափը և ազդեցությունը» ցուցանիշով Հայաստանն արձանագրել է ավելի մեծ աճ՝ զբաղեցնելով 45-րդ տեղը, նախորդ տարվա 65-րդ տեղի համեմատ: «Մաքսային ընթացակարգերի բեռը» ցուցանիշի մասով նույնպես արձանագրվել է էական աճ՝ զբաղեցնելով 127-րդ տեղը, նախորդ՝ 132-րդ տեղի համեմատ: Հատկանշական է, որ, համաձայն GCI 2012-2013 զեկույցի, Հայաստանն իր զարգացման մակարդակով վերջնականապես անցել է անցումային փուլը և առաջին անգամ ընդգրկվել ռացիոնալ զարգացող պետությունների շարքում: Արդեն 2016-2017թ-ին հրապարակված զեկույցում Հայաստանը զբաղեցրել է 79-րդ տեղը¹, իսկ 2017-2018թ-ի զեկույցվող Հայաստանը զբաղեցրել է 73-րդ տեղը²: Համաշխարհային մրցունակության հաշվետվության մեջ Հայաստանն ընդհանուր առմամբ բավականին դրական է գնահատված, իսկ կոռուպցիան և հարկային օրենսդրությունը նշված են որպես բիզնեսի վարման համար հիմնական խոչընդոտներ:

Ներկայացնենք համապատասխան տարիներին Հայաստանի դիրքը ուսումնասիրվող զեկույցում:

2012թ-ին հրապարակված զեկույցում Հայաստանը բարելավել է իր վարկանիշը 6 կետով՝ զբաղեցնելով 55-րդ տեղը³ (2011թ.՝ 61)⁴: Զեկույցի տվյալներով՝ 2010 թվականի հունիսից մինչև 2011 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանն իրա-

կանացրել է կանոնակարգման և ինստիտուցիոնալ դաշտի հինգ բարեփոխում՝ ամենաշատը տարածաշրջանում և աշխարհում: Ըստ Համաշխարհային բանկի գնահատականների՝ Հայաստանն էականորեն բարելավել է իր դիրքը հետևյալ հինգ ոլորտում՝ ընկերության հիմնում, շինարարական թույլտվությունների ստացում, վարկերի ստացում, հարկերի վճարում, ձեռնարկության փակում (լուծարում):

Համաշխարհային բանկի Doing Business 2013 զեկույցում Հայաստանը զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը գտնվելը աննախադեպ առաջընթաց է⁵: ԱՊՀ երկրների շարքում իր դիրքի բարելավման արդյույթներով Հայաստանը լավագույնն է: Ուսումնասիրվող տարվա համար Հայաստանն ամենամեծ առաջընթացը գրանցել է «Ներդրողների պաշտպանություն» ցուցանիշում՝ 73 կետով առաջ գնալով եւ զբաղեցնելով 25-րդ տեղը: Բարելավվել է նաև «Հարկերի հավաքագրման» ցուցանիշը 44 կետով՝ հասնելով 108-րդ հորիզոնականին: «Շինարարության թույլտվության» առումով Հայաստանի դիրքերը բարելավվել են 3 կետով՝ զբաղեցնելով 46-րդ հորիզոնականը: «Էլեկտրականության հասանելիության» ցուցիչով Հայաստանը ևս բարելավում է արձանագրել 42 կետով՝ զբաղեցնելով 101-րդ տեղը:

2015թ-ին «Գործարարությամբ զբաղվելը – 2015» զեկույցում Հայաստանը գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ 189 երկրների շարքում զբաղեցրել է 45-րդ տեղը՝ անցած տարվա համեմատ դիրքը բարելավելով 4 հորիզոնականով (2014թ-ի ցուցանիշը 49⁶)⁷: Գործարարությամբ զբաղվելու դյուրինության ընդհանուր ցուցիչի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվել 10 ենթացուցիչներ: Դրանցից 5-ի մասով Հայաստանը առաջընթաց է արձանագրել, 3-ով՝ հետընթաց, իսկ 2 ցուցիչով դիրքերը մնացել են անփոփոխ:

2016թ-ի Զեկույցի համաձայն, Հայաստանը 2016թ-ին վերջին տարիների ընթացքում իր համար ամենաբարձր՝ 35-րդ տեղը⁸: Զեկույցի համաձայն՝ Հայաստանն աշխարհում 26 երկրներից մեկն է, որն իրականացրել է երեք կամ ավելի բարեփոխում, այդպես է վարվել աշխարհի տնտեսությունների միայն 14 տոկոսը:

¹ The Global Competitiveness Report 2016–2017 էջ 62
² The Global Competitiveness Report 2017-2018. էջ 63
³ Doing Business Report, 2012, էջ 14
⁴ Doing Business Report, 2011, էջ 12

⁵ Doing Business Report, 2013, էջ 11
⁶ Doing Business Report, 2014, էջ 11
⁷ Doing Business Report, 2015, էջ 16
⁸ Doing Business Report, 2016, էջ 13

Մասնավորապես ասվում է, որ Հայաստանում ավելի հեշտ են տրվում շինարարության թույլտվությունները, ինչը ենթադրում է, որ ցածր ռիսկային նախագծերն այլևս չպետք է հաստատվեն անկախ փորձագետների կողմից: Բացի այդ, համաձայն դատական համակարգի նոր օրենքի, վիճարկվող գործերը դատավորներին հասնում են պատահականության սկզբունքով ու ամբողջովին ավտոմատացված համակարգի միջոցով: Մա նշանակում է, որ կրճատվում է կոռուպցիայի ռիսկը՝ նախապես ընտրված դատավորի կողմից գործը վարելու հետ կապված: Եվ, ի վերջո, երրորդ գործոնը, որը Հայաստանի համար զեկույցում ապահովել է դրական տեղաշարժ, Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության հետևանքով Ռուսաստանի հետ առևտրի փաստաթղթաշրջանառության ու սահմանային ընթացակարգերի համար նախատեսված ժամանակի ու ծախսերի կրճատումն է:

«Գործարարություն 2018. բարեփոխումների իրականացում աշխատատեղերի ստեղծման համար» զեկույցում Հայաստանը զիջել է դիրքը 9 հորիզոնականով՝ զբաղեցնելով 47-րդ տեղը՝ նախորդ տարվա 38-րդի համեմատ⁹: Նախկինում հրապարակված Doing Business վարկանիշում Հայաստանի դիրքի փոփոխության հիմնական պատճառներն են՝ այլ տնտեսությունների գործարարության կարգավորման միջավայրերի նշանակալի բարելավումները, մեթոդաբանական շտկումները և տվյալների վերանայումները: «Գործարարություն 2019» (Doing Business) զեկույցում Հայաստանը զբաղեցրել է 41-րդ տեղը՝ նախորդ տարվա 47-րդի համեմատ: Նախկինում հրապարակված վարկանիշում առաջընթացի հիմնական պատճառները տարբեր բարեփոխումներում արտացոլված գործարարության կարգավորման միջավայրի բարելավումներն են¹⁰:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ, մեր կարծիքով, ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածությունը ձեռնարկատիրության ենթակառուցվածքի սուբյեկտների կողմից ենթակառուցվածքային գործիքների կիրառմամբ և ենթակառուցվածքային գործունեության տեսակների կազմակերպմամբ ենթակառուցված-

քային համակարգի զարգացման գործընթաց է:

Գրականության ցանկ

1. Մանասյան Ա.Վ. ՀՀ գործարար միջավայրի ռազմավարության նոր մոդել, «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, 2010թ. [Manasyan A.V. New model of Business Environment Strategy, “Bulletin of Social Sciences”, 2010] [in armenian]
2. Горяинова Л.В. Инфраструктура как объект государственно-частного партнерства. \ Экономика, статистика и информатика. Вестник УМО МЭСИ. – №6. – С.32. [Goryainova L.V. Infrastructure as an object of public-private partnership. \ Economy, statistics and computer science. Bulletin of UMO MESI. –№6. - p.32.] [in russian]
3. Medaković V, Marić B, Gojković R (2016) Cluster as a model organization for small and medium-sized enterprises. 3rd International scientific conference” Conference on mechanical engineering technologies and applications” COMETA 2016. East Sarajevo, Jahorina 2016, pp 517–522
4. World Economic Forum reports
5. The Global Competitiveness Reports 2008-2018
6. Doing Business Reports 2008-2019

⁹ Doing Business Report, 2018, էջ 11

¹⁰ Doing Business Report. 2019, էջ 12